



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

51
p. 1038

150

2002

Այս քաղաքում 1901 թվականին հրատարակված է

ՍՐՄՈՆ ԶԻՄՆԻՔԻՆ

ԱՌԱՋՆՈՐԳ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Ս

Տ Ա Ր Ե Ր Ք

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ռուսմասիրութիւնք վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տաճկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր գիտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանքայի հաշիւներ եւայլն.



Հասնր Ա. — Տեսր Ը.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

Պանիրի

Վանառականութիւնը

(ՏԵՂԱԿԱՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ)

Պանիրը Թուրքիոյ ժողովրդեան սնունդին մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ։ Ուրիշ երկիրներու մէջ ճաշին լրացուցիչ մասը նկատուած է ան, բայց մեր գեղացիներուն ու նոյն իսկ Պոլսոյ բնակիչներուն համար յաճախ ճաշին հիմը կը կազմէ։ Ամառը, երբ չաուսը (խաղող) կ'ելնէ, անշուշտ հանդիպած էք խանութպաններու, գրագիրներու, և մինչեւ իսկ հարուստ վաճառականներու, որք քանի մը շերտ հաց, ողկոյզ մը խաղող և պանիր կ'ուտեն մեծ ախորժով։ Վրայէն գաւաթ մը ջուր, գաւաթ մը խահուէ և ահա խնջոյքը կատարեալ է։ Ուտելիքը խնդիր չէ մեզ համար։ Կը բաւէ որ լաւ հագուած ըլլանք։

* * * Մաքսային վերատեսչութեան հրատարակած վիճակագրութենէն կը տեսնուի թէ ամբողջ Թուրքիոյ մէջ տարին միայն 2,850,460 քիլօ օտար պանիր կ'սպառուի, 14,997,000 զըշ. արժէքով։ Թուրքիոյ սպառած պանիրներն երկու տեսակ են. սեղական և օսար։

Տեղական պանիրներուն մէջ առաջին տեղը կը բռնէ ֆաւսէրը, որուն ամէնէն համբաւաւոր գործարանները կը գրտնուին Էտրնէի մէջ և շրջակաները⁽¹⁾։ Քաւսէրը կը ծախ-

[1] Կը պատմուի թէ երբ աշխարհագրական քարտէսի մը վրայ էտրնէ քաղաքը կը փնտռուէր, զուարճախօս մը ըսաւ. — «Նոտուրտացէ՛ք քարտէսն եւ ո՛ւր որ պանիրի հոտ առնէք, հոն է Էտրնէն։» Դժբախտաբար Էտրնէի պանիրներն առաջուան համբաւը չունին։ Կծու համ մը առած են այսօր, որովհետեւ պանիրագործը դադրած են այլեւս ռումանական աղ գործածելէ։

ուր 30 սնդմ. տրամագիծ և 4 սնդմ. թանձրութիւն ունեցող
 քիլիկներով: Երկար ատեն կրնայ պահուել, մինչեւ որ փայտի
 պէս կը չորնայ: Երբ փափակալ անուներն տակ կէս չոր վի-
 ճակի մէջ ծախուի, ախորժելի համ մը ունի: Բայց քանի
 մնայ, ծթուած կարագի համ կ'առնէ: Եւրոպացին չախորժիր
 այս պանիրէն: Ճրանսացի օրագրող մը, որ Պոլիս եկած էր,
 այս պանիրէն ուտելով infame kacher ըսած է: Պոլիս տա-
 րին կը կլլէ 3,661,200 քիլօ փափ, աւելի քան 176,000 լիւրա
 արժէքով: Քափերը Մայիսի սկիզբէն կ'սկսի և մինչեւ Յու-
 նիսի վերջը կուգայ Պոլիս: Յուլիսին կը դադրի: Յետոյ նո-
 ընէն կ'սկսի գալ մինչեւ Նոյեմբեր: Բացառութիւն է Իզմիրի
 փափերը, որ Մարտին և Ապրիլին կուգայ: Քափերը, 72-90
 կամ միջին հաշուով 81 քիլօնոց պարկերու մէջ կը դրուի, և
 կուգայ

	Պարկ	Միջին գին
Ռումանիայէ	15,000	5 ¹ / ₄ — 5 ⁵ / ₈ շրշ. օխան
Պուլկարիայէ	10,000	5 — 5 ¹ / ₂ » »
» Պալքան	10,000	6 — 6 ⁵ / ₈ » »
» Օվա	3,000	5 ¹ / ₄ — 5 ¹ / ₂ » »
Ռուսիայէ (Պեսարապիա)	5,000	4 ⁵ / ₈ — 4 ⁷ / ₈ » »
Էստոնէէ	1,200	4 — 6 » »
Սեւանիկէ	700	6 — 6 ¹ / ₄ » »
Իզմիրէ	300	4 ⁵ / ₈ — 5 ⁵ / ₈ » »

Յետոյ կուգան

Քափալալ, 70 քիլօնոց սնտուկներու մէջ, 3000 քիլօ, 3-
 3⁵/₈ շրշ.:

Ճերմակ պանիր, կազի սնտուկներով, 50,000 սնտուկ 14
 քիլօնոց, 3 - 5 - 5¹/₂ շրշ. քիլօն:

Սալամուրա, որ Ատաբազարէն և Իզմիրէն կուգայ: Տա-
 րեկան սպառում 1000 տակառ, իւրաքանչիւրը 60 - 70 քի-
 ւօնոց, գին 3¹/₂ - 4¹/₂ շրշ.:

Սալամուրա Պուլկարիոյ, 200 տակառ, 140 - 150 քիլօ-
 նոց. գին 4¹/₄ - 4⁵/₄ շրշ.:

Պուլում բեկիրի, Իզմիրէն, 300 տիկ, քիլօն 4 - 4¹/₂ շրշ.:

» » Պուլկարիայէն, 15,000 տիկ, 50 - 60
 քիլօնոց, քիլօն 4¹/₂ - 5 շրշ.:

Կրեփի պանիր, 4800 օխա, 80 օխանոց սնտուկներով,
 օխան 6 - 7 շրշ. և 600 օխա 140 օխանոց տակառներով,
 օխան 6 - 7 շրշ.:

Սելանիկի պանիր, 3000 օխա, 35-40 օխանոց սնտուկնե-
 րով, քիլօն 11 - 11¹/₂ շրշ.:

Չայիր բեկիրի, 2500 օխա, 40 օխանոց կողովներով, 2¹/₂ -
 4 շրշ.:

Միգիլրա (1). — Շատ եփած: Մեծ մասամբ Արքիպեղա-
 քոսի կղզիներէն կուգայ: Տարեկան 5000 օխա, 1 քիլօնոց
 կողովներով. օխան 4 - 5 շրշ.: Ատաբազարի մէջ ագարակ
 մը կայ, ուր պզտիկ կաղապարներով թարմ պանիրներ կը
 պատրաստուին և շատ լաւ են, բայց մեծ սպառում չունին:

Օսար պանիրներ. — Կ. Պոլիս կ'ընդունի եւրոպական
 պանիրներու գլխաւոր տեսակները, ինչպէս Կրիւլէր, Ռօք-
 ֆօր, Պրի, Բամէնպէս, Հոլանտա, Քօրկօնզօլա, Չէսթըր
 եւլն: Պոլսեցիներն ամէնէն աւելի հաւնած են Կրիւլէրի,
 որուն մեծ մասը սակայն Զուիցերիոյ հովիտներուն երեսն
 անգամ տեսած չեն, ո՛չ ալ Սափուա, Ժիւրա, Էն եւ Վօժ-
 ֆրանսական նահանգներուն, որք ընտիր տեսակներ կը
 պատրաստեն: Շիտակն ըսելով, ճշտիւ յայտնի չէ թէ ո՛ր երկ-
 րին մէջ կը պատրաստուի Պոլսոյ մէջ ծախուած Կրիւլէրներու
 մեծ մասը, բայց անոնց փայտի պէս չոր զանգուածէն կ'ե-
 րեւի թէ կաթէ աւելի գետնախնձոր ունեցող երկրի մը ար՝
 տաղութիւնն են: Աժան ըլլալուն՝ որակը նկատողութեան
 առնող չկայ: Ասոր համար է անշուշտ որ Պոլսոյ մէջ gra-
 vière անունը կուտան այս պանիրին:

Եթէ gravièreի վերջին գիրը ջնջէք, այդ պանիրին բուն
 անունը տուած կ'ըլլաք. — gravier = կոպիճ, խիճ:

[1] Այս պանիրն յաճախ այժի կաթէ կը շինուի եւ շատ գնահատ-
 ուած է, բայց դժբախտաբար շինուիւնը կը դաղրի տար եղանակնե-
 րուն, որովհետեւ առանց աղի ըլլալով, 48 փամէն աւելի չի դիմանար:
 կը թռուի: Միգիլրան գնտակի ձեւ ունի:

* * Պոլսոյ մէջ սպառած օտար պանիրները կուգան
Զուիցերիայի . — 1000 հնձանակ (caveau քիւլիֆ լազա)
Կրիւյէր : Մէկ հնձանակը կը կշռէ 55-70 քիլօ : Միջին գին
100 քիլօն 155 ֆրանք :

Հոլանտայի . — 900 սնտուկ Հոլանտա ըսուած պանիրէն :
Մէկ մի սնտուկ կը պարունակէ 12 քիլի եւ կը կշռէ 22 քի-
լօ . միջին գին 100 քիլօն 130 ֆրանք :

Իտալիայի . — 450 կաղապար բարմեզան, մէկ կտորը 20-
25 քիլոնոց , 100 քիլօն 180-240 ֆրանք ըստ տեսակի :
70 կաղապար forիօգօլա ձերմակ
30 » » կանաչ . մէկ կաղապարը 10
քիլոնոց : 100 քիլօն 170 ֆրանք :

Աւստրիայի . — 50 սնտուկ , իւրաքանչիւր սնտուկ կը
պարունակէ 6 քիլի եւ կը կշռէ 12 քիլօ : 100 քիլօն 160 ֆրք .

Անգլիայի . — 12,240 լիտր Չէսդըր : Անգլիական կենդի-
նարին (112 լիտր) գինն է 60-75 շիլին :

Ֆրանսայի . — 50 հնձանակ Կրիւյէր . մէկ հնձանակ 55-
60 քիլօ : Գին 100 քիլօյի 150 ֆրանք :
30 սնտուկ հօլանտ 12 քիլիկնոց
10 » » 18 » մէկ քէլէն 2 քիլօ :

Գին 110-170 ֆրանք ըստ տեսակի :
11,000 քիլօ Ռօքֆօր , 12-14 քիլօնոց սնտուկներով .
միջին գին 2 ֆրանք քիլօն :

100 տուփ լօռէն , 5 քիլօնոց . քիլօն 1 ֆրանք : Նաեւ
Թարմ պանիրներ , ինչպէս Բամէնպէն , Պրի , Ժէրվէ ,
Ժէքս , Մօն տ'օն , Մատամ Յլէօրի որք ձմեռը կուգան , իբր
25,000 ֆրանք արժէքով :

* * Փրանսական Ռօքֆօրն երեք տեսակ է : Առաջինը ,
որ գերընտիր է , կը պատրաստուի Ռիւի համբաւուոր ըշ-
տեմարաններուն մէջ , որք Ռօքֆօրի արտադրիչներու մի-
ացեալ ընկերութեան սեփականութիւնն են : Այս ընկերու-
թիւն մինակ ինք տարին 5 միլիոն քիլօ պանիր կը շինէ :
Ռօքֆօրի երկրորդ տեսակը Ավէյրոնի կամ շրջականներու
մէջ կը պատրաստուի : Երրորդը նմանութիւն է եւ կը
պատրաստուի Հէրոլթի , Բանդալի , եւ Ռօնի մէջ : Պոլ-

սոյ մէջ Մալթըզները կը ծախեն այս պանիրը որ Ռօք-
ֆօրի գլխաւոր շտեմարաններուն մէջէն հաւաքուած մնա-
ցորդներով կը շինուի : Նոր արտադրութեան ժամանակը մօ-
տենալուն , այսինքն Փետրուարէն Մայիս , շտեմարանները
կը մաքրուին եւ հին պանիրները կը յանձնուին վաճառող-
ներու որք ձեռնավար կառքերու մէջ դնելով գիւղէ գիւղ
կ'երթան կը ծախեն : Մնացորդները կը գնեն երկրորդական
շտեմարաններու տէրերը , որք կը չորցնեն , փշրանքներու
կը վերածեն եւ կը շաղվեն իրենց նոր պանիրներուն հետ
որք այսպէս Ռօքֆօրի մօտեցող համ մը կ'ստանան : Ռօք-
ֆօրն առաջին անգամ 1850ին Պոլիս մտցուց Ռօշ Վէնէլ ա-
նուն ֆրանսացի մը Մարսիլիայէ Պոլիս եկող շոգենաւուց
սեղանայարդարներուն ձեռքով : Խնդրանքը շատցաւ եւ
դիմու՞մ եղաւ Մարսիլիացի յանձնակատարներու : Բաւական
տարիներ ետքը , ուղղակի յարաբերութիւններ հաստատուե-
ցան Ֆրանսացի արտադրիչներուն եւ Պոլսոյ վաճառական-
ներուն միջեւ : Ահաւասիկ Ռօքֆօրի պանիրին գիները , ար-
տադրութեան հրապարակներուն վրայ :

Ա . տեսակ 220—240 ֆրանք	} 100 քիլօն
Բ . » 180—200 »	
Գ . » 130—140 »	

Առաջին երկու տեսակներուն համար փոխադրութեան
ծախքը շատ է : Աւստրիոյ եւ Պուլկարիոյ մէջ պատրաստուած
քանի մը տեսակ կեղծ Ռօքֆօրներ ջանացին մեր հրապա-
րակին վրայ սպրդիլ , բայց այս վեհերոտ փորձեր մինչեւ
հիմայ չյաջողեցան :

Վերջացնելէ առաջ ըսենք թէ ցաւալի է յոյժ որ էապէս
երկրագործական երկիր մը , որպէս է Թուրքիա , — որու հո-
ղերուն 3/4 մասն անմշակ է , — այսքան մեծ քանակութեամբ
պանիր կը ներածէ օտար երկիրներէ , մինչ կընար իրեն
պէտք եղած պանիրն ինք պատրաստել , ոյժ տալով դուա-
րաբուծութեան :

* * *
Պանիրի միջազգային վաճառականութեան վրայ խօսելէ
ետք ցոյց պիտի տանք դալար պանիրի (չայր բէնիւրի) ,
Ռօքֆօրի , Բանդալի եւլն . պատրաստութեան եղանակները :

Հ Ա Շ ՈՒ Ա Կ Ա Ն

Գտնել ապրանքի մը վաճառման գինը, շահով և զեղ-
չով: — Օրինակ. — Կերպասի մը մէջըրոն 6 զրշ. ապրանք
եղած է: Կուզենք վաճառման գինին վրայ 10 0/0 շահիւ,
18 և 2 0/0 զեղչելէ ետք: Քանի՞ պիտի ծախենք:

վաճառման գին	Ք	6 արժէքին
Առանց զեղչի	82	100 18 0/0 զեղչով
»	98	100 2 0/0 »
» շահի	90	100 10 0/0 շահով

$$\text{Ք} = \frac{6 \times 100 \times 100 \times 100}{82 \times 98 \times 90} = 8,296$$

Փորձ. — վաճ. գին 8,296 18 0/0 զեղչ = 6,803
6,803 2 0/0 » = 6,667
6,667 10 0/0 շահ = 6 արժէքին

Յաջորդական զեղչեր. — Սովորութիւն է մետաքսե-
ղէններն յաջորդական զեղչերով ծախել, ինչ. 18 և 2 0/0,
կամ 16, 3 և 2 0/0: — վաճառման գինը գտնելու համար
համեմատութեան շարել հետեւեալ կերպով. —

Ք	6
84	100
97	100
98	100

$$\text{Ք} = \frac{6 \times 100 \times 100 \times 100}{84 \times 97 \times 98}$$

Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր ՈՒ Գ Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն Ը

Կերո. — Հաշիւներու ճշտութեան վրայ ապահով ըլլա-
լու և սխալները — եթէ կան — գտնելու համար հարկ է
ամէն իրիկուն պատրաստել հետեւեալ կշիւը. —

Ն Մ Ո Յ Հ Կ Հ Ի Ռ Ի

ՕՐ Հ Ա Շ Ի Ի Ն Ս Ի Ի Ն Ա Կ Ն Ե Ր Է Ն Ա Ռ Ն ՈՒ Ա Մ

		Պարտի	Պահանջէ
վանառառուց	պարտի	176525	
	պահանջէ	88021	88504 »
Շահ եւ Զեց	պարտի	1144	
	պահանջէ	140	1004 »
Գնող	պարտի	20219	
	պահանջէ	20219	» »
վանառող	պահանջէ	79577	
	պարտի	44694	» 34883
Իրամասուց	պարտի	40902	
	պահանջէ	15277	25625 »
Զանազան	պահանջէ	180250	
	պարտի	100000	80250
		115133	115133

Աւելի լաւ բացատրելու համար այս գրութեան մասուցած դիւրութիւնները, ստորեւ կը նշանակուին ըստ իւր շահութիւնները, ստորեւ կը նշանակուին ըստ իւր շահութիւնները, ստորեւ կը նշանակուին ըստ իւր շահութիւնները: —

10 ՄԱԿԻՍ 1901

Օրհանգի	Վ. անու. անուն	Շահ եւ ջէն	Գ. նոր	Վ. անու. ողբ	Գ. անու. անուն	Գ. անու. անուն
Մնուակ	Գրաւագրական	50000			50000	50000
Գրուած գրամագրուին						
Գրուած Լ. Խոնէ	Մնուակին	45000			45000	45000
Յանձնուած գրամ						
Կարասի	Մնուակին	1600			1600	1600
Ընդհ. ապրանք Էպիսկոպոսին	Ըստ հաշուեցոյցի	9400		9400	9400	9400
Գ. արհմեծան Ընդհ. ապրանքի	Ըստ հաշուեցոյցի	3600	3600		3600	3600
Գ. անն ամուս. Գ. արհմեծանի	Մեր հաշուեցոյցը		2000			2000
Ս. Լեւոնեան Ընդհ. ապրանքի	Փոխանակուողը Ն. . .	3600			3600	3600
Տոկոս	Ըստ հաշուեցոյցի	2000			2000	2000
	Ա. Լեւոնեանին					
	Զեղ. 10	40				40

Չաղապարհներն իր ալիւրը հացագործին կը ծախէ ուղղակի կամ միջնորդներու ձեռքով: Ալիւրին համար ամէնէն աւելի փնտառած յատկութիւնն է ճերմակութիւն. բայց նաեւ թանձրութիւն մը, սերտութիւն մ'ունենալու է, այսինքն օրինակի համար, եթէ բուռ մը (ալուս) ալիւր առնենք, պէտք է միանայ, կցուի, և գնտիկ մը կազմէ մեր ձեռքին մէջ, և ոչ թէ փոշիի պէս մատներուն մէջ տեղերէն խոյս տայ: Եթէ այդպէս ըլլայ, ալիւրին տեսակն ստորին է: Քիմքը կսկծեցնող կամ օճառի, բորբոսածի հոտ ունեցող ալիւրն ալ վարնոց տեսակէ է: Ալիւրը, մանաւանդ ան՝ որ պէտք եղածին չափ չոր չեղող կամ խմորումի սկզբնաւորութիւն մը ունեցող ցորենէ առաջ եկած է, արուելու ենթակայ է մասնաւորապէս տաք եղանակին, խոնաւ օդերուն կամ փոթորկալից ատեններ: Եթէ այդ միջոցներուն ալիւր ունիք ձեր մթերանոցին մէջ, պէտք է իսկոյն խնամքով տեղափոխէք պարկերը, գետնի վրայ զլտորէք և կարելի եղածին չափ զգուշանաք իրարու վրայ դնելէ: Երբ պարկին մէջ երկաթեայ ձգոտ մը մտցնէք և դուրս հանած ժամանակինդ տեսնէք թէ տաքցած է՝ քանի մը վայրկեան պարկին մէջ կենալուն համար, պէտք է անմիջապէս պարպէք ալիւրը, մինչև որ պաղի: Յաճախ կը պատահի որ ալիւրը՝ պարպուած ժամանակ՝ գնտիկներու ձեւ կ'առնէ: Այն ատեն երկաթեայ թելեր ունեցող մաղերէ անցընելու և գնտիկները ձեռքով ճզմելու է, մինչ տակաւին ալիւրն զգալապէս կորուսած չէ իր յատկութիւնը: Բայց երբեմն այնքան կարծր կ'ըլլայ որ պարկէն դուրս չի հանուիր դիւրաւ: Այս պարագային պէտք փայտէ թակերով ձեծել ալիւրը և յետոյ մաղել: Խմորումի այս աստիճանին հասած ալիւրն արդէն շատ բան կորուսած է իր արժէքէն: Կծու համ մը կ'առնէ և կը կորսնցնէ այն ճերմակ գոյնն ու համը, որք յատուկ են ընտիր տեսակ ալիւրին: Չոր ցորենէ առաջ եկած ալիւրները գրէթէ միշտ լաւ կը պահուին: Սակայն հազուադէպ է որ ամբողջ տարի մը մթերանոցին մէջ մնացած ալիւրը չկորսնցնէ իր յատկութիւնը:

Ալիւր Թուրքիոյ մեջ. Պոլսոյ ջաղացքները, որք կատարեալ գործիքներով օժտուած են, ամէն տեսակ ցորեն կրնան աղալ, բայց մասնաւորապէս ընթացիկ ալիւրները միայն կը պատրաստեն. Այս ջաղացքներէն շատերը ցորենի տէրերուն հաշուոյն կը գործեն. Աղացման գինն է քիլէ գլուխ 50 փր. ոսկեղրամ: Քիլէն 20-21 1/2 օխա կը կշռէ և հետեւապէս սղացման գինը 100 քիլոյին միջին հաշուով 4 զրշ. 22 փր. կուգայ: Տեղական ջաղացքները ալիւրի կը վերածեն գլխաւորաբար մախլուք (կարծր և կակուղ ցորենի խառնուրդ) ցորենները: 100 քիլո ցորենը կ'արտադրէ

75-76 քիլո ալիւր

17-18 » թեփ

2 » Բ. տեսակ ալիւր և քանի

մը քիլո ալ կորուստ: 57 լիպրան, որ ցորենի վաճառման հիմ կը ծառայէ, 21 օխա 36 տրամ է, մէկ լիպրան ըլլալով 148 տրամ: Թուրքիա կը ներածէ հետեւեալ ալիւրները.—

Ռուսական.— Օտեսա 000. 00. 0. 1 Ն. 1 1 Ն. 2 1 Ն. 3 II. III. IV.

Ռումանական.— Ն. 3 Միլա, Ն. 5 Միլա, Ն. 3-4 Վիոլաթօ, Ն. 3-4 Բրայովա, Իպրայիլ:

Ամերիկեան.— Extra, Բ. տեսակ:

Ֆրանսական.— Մարսիլիա, Թուր էյֆեյ, Լիօն (Առիւծ) ևն:

Պոլկարական.— Վառնա Ն. 2, Բրմա, Պուրկազ Ն. 2

Տեղական ալիւրներն են. Բրմա, Սամսոն, 1. 2. 3. Ամասիա, Եւայլն:

Օտմանեան մաքսատուներ՝ հանրային առողջութեան տեսակետով՝ կը պահանջէ որ ներածուած ալիւրն առնուազն 9% չոր (կամ 27% խոնաւ) կլիւդին (մաժուցիկ նիւթ մը) պարունակէ և այդ կլիւդինն առնուազն 25% առաձգականութիւն ունենայ:

Ալիւրը զանազան երկիրներու մեջ.— Աւստրիա շատ ալիւր կ'արտադրէ: Իր ալիւրներն համրաւաւոր են: Բնիկ ցորենով շինուած ալիւրներու տարեկան արտածումը կը հասնի 1/2 միլիոն պարկի (1 պարկը 280 անգլ. լիպրա), իսկ օտար ցորենով շինուած ալիւրներու տարեկան արտածումը՝ 1 միլիոն պարկի: Աւստրիա իր ալիւրները կը ծախէ Գերմանիոյ, Ա-

մերիկայի, Ֆրանսայի, Իտալիոյ, Զուիցերիոյ, Թուրքիոյ (10,000 պարկ) Սերպիոյ, Պրոպիլիայ եւն.:

Ֆրանսա.— Տարեկան արտածում 400,000 կենդինար. և ներածում 380,000 կենդինար, մեծ մասը Պելժիայէ, Աւստրիայէ, Մ. Նազանդներէ և Գերմանիայէ:

Պելժիա.— Ներածում 150,000 պարկ (280 լիպրանոց) և արտածում 200,000 պարկ:

Գերմանիա.— Ներածում 300,000 քուօրդըր (28 լիպրա), մեծ մասամբ Աւստրիայէ և Ամերիկայէ: Արտածում 1,300,000 պարկ:

Անգլիա.— Կը ներածէ 8 միլիոն պարկ (280 լիպրանոց) որուն

70% ը Ամերիկայէ

12% ը Քանադայէ (1)

7% ը Աւստրիայէ

9% ը Ֆրանսայէ

1% ը Գերմանիայէ

1% ը Զանազան երկիրներէ (Ռուսիա,

Իտալիա, Եւրոպական և Ասիական Թուրքիա, Ռումանիա, Պուրկարիա, Հոլանտա, Հնդկաստան եւն.):

Հոլանտա.— Ներածում, 1 միլիոն պարկ (280 լիպրանոց) մեծ մասով Ամերիկայէ, Պելժիայէ, Գերմանիայէ, Ռուսիայէ: Արտածում 100,000 պարկ:

Իսպիա.— Ներածում 16,500 քուօրդըր և արտածում 58,000 քուօրդըր:

Զուիցերիա.— Ներածում 300,000 պարկ գլխաւորապէս Ֆրանսայէ:

Ամերիկա.— Արտածում 11 միլիոն քուօրդըր եւն.:

Գերմանիա 7,30 մարք մաքսատուրք կ'առնէ քինդալէն. Իտալիա՝ 12,30 ֆր. (ոսկեղրամ). Սպանիա՝ 17,32 բէզէդա.

Բորզուկալ (արգիլուսծ), Պելժիա 2 ֆր. Դանիա (ազատ). Նորվեկիա՝ 2 քուրօն. Հոլանտա (ազատ). Զուիցերիա՝ 2 ֆր. Աւստրիա 3,75 ֆիօրին (ոսկեղրամ). Ֆրանսա 11 ֆր. եւն.:

[1] Գիտելի է որ Քանադայի հաշուոյն անցած ալիւրներուն մեծ մասն Ամերիկեան ալիւրներ են, Քանադայի նաւահանգիստներէն արտածուած:

* * Արմտիքը՝ ալիւրի վերածուելու համար՝ կ'ենթարկուի արհեստական գործողութիւններու, ինչպէս կեղեւում, մաղում, աղացում եւն. : Առաջին երկու գործողութիւններուն նպատակն է արմտիքի կարծր մասը բաժնել շրջասերմէն (périsperme) կամ ներքին ալիւրոտ մասէն: Բայց այս մասն ալ նոյնատարր չէ: Արտաքին մասը կամ շրջապատն աւելի բնասպիտ և իւղ կը պարունակէ քան կեղեւոնական մասը, որ շատ ճերմակ է: Այս վերջինէն կ'ելնէ բուն ալիւրն, իսկ միւսէն կ'արտադրուի թեփը: Աղացումին և մաղումին համեմատ երեք տեսակ ալիւր կ'ըլլայ: Ա.— Նաչիհ, շատ ճերմակ և ընտիր: Գրէթէ բոլորովին նշայ կը պարունակէ, իսկ ճարպային և աղային նիւթեր՝ շատ քիչ: Այս ալիւրով կը պատրաստուին պերճանքի հացեր, թեթեւ, բայց նուազ սննդարար: Բ.— Առաջին և երկրորդ տեսակ ալիւրները նուազ ճերմակ, բայց աւելի սննդարար: Այս ալիւրներով կը շինուին սովորական հացերը: Վերջապէս Գ.— Թեփը: Հետեւեալ ցուցակին մէջ կը տեսնուի քանի մը տեսակ ալիւրներու հարկերովական բաղադրութիւնը.—

Նշայ, շքր. խորշանիւծ Հնր.

	Չուր	Բնասպիտ	ճարպ	եւայն [cellulose]	նիւթ		
Ընտիր ցորենի ալիւր	13,3	10,2	0,9	74,8	0,3	0,5	
Ստորին »	12,7	11,7	1,4	72,2	1,0	1,0	
Հաճարի [չավտար] »	13,7	11,5	2,1	69,7	1,6	1,4	
Եգիպտացորենի »	10,6	14,0	3,8	70,5	0,6	0,5	
Հաճարախառն [Չավտարը]	12,9	11,7	1,6	71,4	1,2	1,2	
Ցորենի »							
Գարբի »	14,8	10,9	1,5	71,7	0,5	0,6	
Վարսակի »	10,1	14,7	5,9	64,7	2,4	2,2	
Ընտիր ալիւրի թեփ	14,1	13,5	2,5	30,8	31,6	7,5	

Արմտեաց մէջ գլխաւորապէս ցորենն է որ կը հայթայթէ ալիւրներու ամենամեծ մասը: Ցորենն երեք գլխաւոր դասակարգի կը բաժնուի: Ա. Կակուղ կամ ճերմակ ցորեն, որ շատ ճերմակ և ընտիր ալիւր կուտայ. բայց կլիւդէն շատ չունի: Բ. Կէս կարծր ցորեն, որ ամէնէն շատ գործածուածն է: Ասոր ալիւրը շատ կլիւդէն կը պարունակէ: Գ. Կարծր ցորեն, որ միւսներէն աւելի հարուստ է ր'բակա-

ծնային, ճարպային և աղային նիւթերով, բայց նուազ ճերմակ և նուազ ընտիր ալիւր մը կուտայ: Այս ալիւրով կը պատրաստուին սննդական խմորներ ինչպէս կորկոտ, թելահայս (եհիրիյե), դդմած (մախաբնա) եւն. : Այս ցորեններ և իրենց ալիւրներ՝ քիչ ջուր պարունակելուն համար՝ երկարատեան կը պահուին մինչեւ իսկ գետնափոր շտեմարաններու մէջ: Ցորենի ալիւրը՝ հացէն զատ՝ կը գործածուի նաեւ կարագի, հաւկիթի, շաքարի, աղի եւն. հետ խառնուած սննդաբար նիւթերու պատրաստութեան: Հաճարի և վարսակի ալիւրներն ալ ջուրով կ'եռացնեն և հետը կաթ: Կարագ կամ մսի հիւթ խառնելով սննդաբար ուտելիքներ կը պատրաստեն: Այս ուտելիքներ դիւրամարս են և տղաքներու, հիւանդներու և նոր ապաքինողներու համար շատ օգտակար: Կը պարունակեն 1, 2 0/0 բնասպիտ, 1,5 ճարպ, 5,3 բնածուխի ջրատ (hydrate de carbone) 1 հանքային աղեր և 91 ջուր: Եգիպտացորենի և սեւ ցորենի ալիւրները կարագի հետ խառնելով կը շինեն կարկանդակ, շօթ եւն. : Վերին Իտալիոյ մէջ եգիպտացորենի ալիւրը կաթի հետ խառնելով կը շինեն բօլեկոն, աղգային կերակուրն այդ կողմերուն, զոր սովորաբար պանիրով կ'ուտեն: Այս ուտելիքը շատ սննդարար է, բայց երբ եգիպտացորենը ժանկաւ (verdet) ըսուած տեսակ մը թունաւոր սունկով վարակուած ըլլայ, մորթալիտ առաջ կը բերէ: Այս հիւանդութիւն մեծ վնասներ պատճառած է Իտալիոյ մէջ և Ֆրանսայի այն գաւառներուն մէջ ուր եգիպտացորեն շատ կ'սպառի:

Ոսպի (մերիսիկ), որունի (պեգեթիա), լուբիայի, բակիայի ալիւրները կը գործածուին խիւս (լարա) և թան շինելու: Ասոնք սննցիչ տարրեր կը պարունակեն և իրենց աժանութեամբ դիւրամասնելի են գործաւոր դասակարգին: Յիշենք նաեւ գետնապիտակենիի (Ամերիգան Ֆրսրգ) ալիւրը, զոր առաջին անգամ Նորտլինկէր մոցուց առուտուրի մէջ և որ կը պարունակէ 45 0/0 բնասպիտ, 20 0/0 բնածուխի ջրատ, 19 0/0 ճարպ եւն. : Բիլօն 100 փրյ. է: Ծթած համն և կծու հոտն արգելք եղած են անոր ընդհանրացման:

* * * Տղաքներու, հիւանդներու և ապաքինողներու հա-

մար յատկապէս պատրաստուած ալիւրներ կան, ինչպէս նէտլէի ֆառին կաթին, Մալթոյի կիւմիսոյ, Չամ ֆրումանդին եւն. : Ամէնէն լաւագոյնը նկատուած է Մալթոյի կիւմիսոյը, որ հաւատարապէս կը գործածուի թէ՛ տղաքներու թէ՛ հիւանդներու համար : Միւսները գոհացուցիչ արդիւնք մը տուած չեն : Եթէ շարունակ գործածուին, ծիւրում և ոսկրաթիւքութիւն առաջ կը բերեն, ինչպէս հաստատած են Տոքզորք Ռէյմէր, Ալպրէիսը, Յիլէյիման եւն. : Մնաց որ գինի մասին ալ առաւելութիւն չեն ընծայեր այս ալիւրները, քանի որ 500 կրամնոց տուփերն առնուազն 7½ 8 դրչ. կը ծախուին : Հիւանդներու կամ ապաքինողներու համար պատրաստուած ալիւրներուն մէջ յիշենք Մոնսամին, Առուուոյ, Ռըվայիսիէն (ոսպի և վարսակի ալիւր), Քեռ (լուրիայի և վարսակի ալիւր) եւն. : Այս գանաղան ալիւրներուն մէջ ըստ բժշկաց նախնարելի է քեռը, որովհետեւ առատորէն կը պարունակէ թէ՛ բնասպիտ, թէ՛ բնածուխի ջրաս :

* * * Ալիւրի վրայ հրատարակուած են հետեւեալ գիրքերը. —

Ueber Ernährung und Korpenwægung der Neugeborenen (1877). — Traité de Diététique (Քարիզ 1897). — Die menschlichen Nahrungs und Genussmittel (Պերլին 1893) :

* * * Ալիւրի հոմանիշները — Ֆրանս. farine, Անգլ. meal, Գերմ. mehl, Սպաներէն harina, Իտալերէն farina եւն. :

ԱԼԼԱՀԱՊԱՏ. — Քաղաք Անգլիական Հնդկաստանի, Գանգէս գետին բերանը : Բնակիչ 300,000 : Ունի բամբակեղէնի և մետաքսեղէնի գործարաններ : Առեւարական կառուցող գործառնութիւնք : Եւրոպական վաճառքներ կը փոխանակուին հիւսիսային Հնդկաստանի արտադրութեանց հետ : Ինչպէս լեզակ, բամբակ, չաքար, աֆիոն, թէյ, Դեկտեմբերին և Յունուարին տեղի կ'ունենայ մեծ տոնավաճառ մը ուր կ'այցելեն 250,000 հոգի : Քաղաքին մէջէն կ'անցնի երկաթուղոյ մեծ գիծ մը որ կալկաթան կը միացնէ Տէլհիի և Բեշավերի :

ԱԼՊՈՄ. — Յիշատակներու, ծանօթագրութիւններու, պատկերներու, լուսանկարներու, նմոյշներու և բոյսի, դըրոշմի, բանաստեղծութիւններու եւն. հաւաքածոյ : Ընդհանրապէս կը շինուի թանձրաքարտէ և մարտիկնիէ (սախքիլսն) : Այս վաճառք, որ 1860էն ի վեր հետզհետէ մեծ սպառում ունեցած է, կը շինուի գրէթէ բոլոր մեծ կեդրոններու և մասնաւորապէս Բարիզի և Տիփոնի մէջ : Արտածման քանակութիւնն յայտնի չէ, որովհետեւ մարտիկնիէ կամ թանձրաքարտէ պատրաստուած ուրիշ ապրանքներու հետ խառնուած է : Ալպոմ արտածող երկիրներու մէջ առաջին տեղը կը գըրաւեն Ֆրանսա և Գերմանիա :

ԱԼՔՈՒ. — [Սահման. — Պատմական. — Դասակարգութիւն. — Ընդհանուր յատկութիւնք. պատրաստութեան եղանակը. — Արտադրութիւն. — Վաճառականութիւն եւ սպառում. — Գործածութիւն] :

Արարերէն էլ (ը) և ֆոհոյ (շատ բարակ փոշի մը) բառերէն կազմուած, ցնդական, անգոյն և ջուրէն աւելի խիտ հեղուկ մը : Արարացի ալքիմիագէտներ առաջին անգամ զըտեցին գինիին և այդ զտեալ մասն անուանեցին էլ-ֆոհոյ : Ֆրանսայի մէջ, 13րդ դարուն՝ Առնօ տը Վիլնէօլ ալքօլին ոյժատու յատկութիւնները կը գովէր : Ալքօլն ապա 16րդ դարուն ուսումնասիրուեցաւ Բորդայի կողմէ, առաջին թորանոցին (իմպիք) հնարիչը և 17րդ դարուն՝ Նիքօլա լը Ֆէվըրի, Կլօպէսի եւն. կողմէ, որք յաջողեցան ալքօլ հանել նաեւ գինիէն տարբեր նիւթերէ, բայց տեսան որ ձեռք բերուած հեղուկներն իրենք ալ տարբեր էին : Այն ատեն հաստատուեցաւ ո՛չ թէ մէկ ալքօլի, այլ ալֆօնետու գոյութիւնը : Այսօր, քիմիագէտներն ալքօլ անունը կուտան ջրաբնածխային բաղադրութիւններու որք կրնան միանալ թթուներու (acide) հետ և եթե կոչուած չէգոք բաղադրութիւններ առաջ կը բերեն, Թերեւս հազարաւոր տեսակ ալքօլներ կան : Շատերը ծանօթ են այսօր : Իւրաքանչիւր ալքօլ իրեն յատուկ բնախօսական և քիմիական յատկութիւններն ունի : Ամէնէն աւելի տարածուած և ամէնէն օգտակար ալքօլն է գինեկանը (vinique) : Զուտ ալքօլը կ'այրի դեղին բո-

Սովորական դրութեամբ 38 փոխադրութիւն պիտի ըլլայ
ի Մայր Հաշիւ, մինչ այս դրութեամբ 38էն 17ը զեղչուած է։

$$\frac{38}{17} = \text{գրէթէ } \frac{1}{2}$$

Ժամանակ և աշխատութիւն կէս առ կէս զեղչուած։ Ա-
պահով, դիւրին և արագ ֆոնքոյ։

Օ Ո Ա Կ Ա Ն Կ Շ Ի Ռ

10 Մայիս

Պարտի		Պահանջ
վաճառատուն	15296	վաճառողը 9400
Շահի և Ձէն	514	Զանազանը 56000
Դրամատունը	48590	
	<u>64400</u>	<u>64400</u>

Հ Ա Շ Ո Ի Ե Կ Շ Ի Ռ

10 Մայիս

1. Իրական գոյք

Մտուկ	8132
Կարասի	1600
Ընդհ. Ապրանք	5000

[Ըստ միջնայնոցի. — Այս տետրակը բռնե-
լու նոր եղանակ մը կայ, որով կարելի է
[անմիջապէս գիտնալ վաճառատան մէջ
[գտնուած ապրանքը եւ որու վրայ պիտի
[խօսինք յետոյ։]

Դանձ. սում. 1712

16444

2. Վաճառատան պարտքը

Ա. «Վաճառատուն» սիւնակին պարտքը	75072	
Բ. «Շահի ու զէն» » »	514	75586
		<u>16444</u>
Գ. Բայց վաճառատունը իրական գոյք ունի		<u>59142</u>

3. Վաճառատան պահանջներ

«Վաճառատուն» սիւնակին պահանջքը	59776	
	59142	
Զուտ շահ	<u>634</u>	

Ա. մ փ ո փ ու մ

վաճառատան պահանջքը	59776
» պարտքը	59142
	<u>634</u>

ԻՆՉ Է ԴՐԱՄԱԳԼՈՒԻԸ

1. Սահման. — 2. Հաստատուն եւ շարժուն դրամագրուիս. — 3. Ա-
նոնց դերը արտադրութեան մէջ. — 4. Յարաբերական արժէք դրամա-
գրուիսներու. — 5. Դրամագրուիսն եւ մարդուն արժէքը. — 6. Դրամա-
գրուիս եւ աշխատութիւն. — 7. Դրամագրուիսի շահը։

1. — Մարդուն պէտքերը գոհացնելու ծառայող ամէն բան
օգուտ մ'է (utilité)։ Սեփականութիւն բառը կ'ենթադրէ այն ի-
րաւունք զոր անհատ մը կամ անհատներու խումբ մը ունի մէկ
կամ մի քանի օգուտներ վայելելու, պահելու կամ փոխան-
ցելու։ Հարստութիւն բառը անհատի մը կամ անհատներու
խումբի մը ունեցած օգուտներուն յարաբերական քանակու-
թիւնը կ'ենթադրէ և դրամագրուիս բառը այդ օգուտներուն
տնտեսական գործածութիւնը կը նշանակէ։ Ճէյմս Միլ՝ այս
սահմանն ընդարձակելով՝ ըսած է. — «Դրամագրուիսը մը-
թերուած աշխատութիւն է»։ Ճիշտ չէ սակայն։ Ամէն դը-
րամագրուի մէջ բաժին մը կայ բնական ազդակներու (agent)
որք բան մը չեն պարտիր աշխատութեան։ Պ. Շահլամեանցի
ձայնը դրամագրուիս մ'է, միթերուած աշխատութիւն չէ։
Նիսի արեւը դրամագրուիս մ'է, բայց միթերուած աշխատու-
թիւն չէ։ Պ. Շահլամեանց ռւսած է իր ձայնը գործածել։
Իտալացի կալուածատէրեր օգուտ կը քաղեն Նիսի կլիմայէն։
Թէ՛ մին թէ՛ միւսները տնտեսական գործածութիւն մը տուած
են բնական ազդակներու։ Ահա՛ աշխատութեան բաժինը՝
դրամագրուիսն մէջ։ Աւելի բան մը չկայ։

2. — Դրամագրուիսը երկու տեսակ է. հաստատուն, շար-
ժուն։ Տուներ որ զիս կը պատսպարէ, այն ատեն միայն օգ-
տակար կրնայ ըլլալ ինձ երբ իր ինքնութիւնը չկորսնցնէ։
Շոգեշարժ մեքենայ մը չի կրնար ծառայութիւն մատուցանել
ինձ եթէ իր ինքնութիւնը չպահէ։ Ընդհակառակն հանքա-
ծուխը, զոր կը նետեմ այդ մեքենային հնոցին մէջ, ինձ
օգտակար կրնայ ըլլալ այն ատեն միայն երբ տաքութեան

վորսուրի և շոգիի վերածէ ջուրը, զոր լեցուցած եմ կաթսային մէջ, Բամբակը շփման մէջ կը դնենք շամփրակի մը (իլ) հետ: Շամփրակը շամփրակ մնալու է որպէսզի օգտակար ըլլայ ինձ. իսկ բամբակն այն ատեն միայն օգտակար կ'ըլլայ երբ թելի վերածուի: Ահա թել եղաւ, բայց ես հազարաւոր քիլօմէդը երկայնութեամբ թել չեմ կրնար արտադրել իմ անձնական գործածութեանս համար: Այս թելեր օգտակար կ'ըլլան ինձ երբ իրենց ինքնութիւնը կորսնցնեն, այսինքն դրամի վերածուին: Այսպէս է ամէն ապրանքի համար: Գալով ընտանի անասուններու, աքաղաղ մը իր հաւերուն մէջ այն ատեն միայն օգտակար կ'ըլլայ ինձ երբ աքաղաղ մնայ և որձատ աքաղաղ մը (ըպլը) օգտակար կ'ըլլայ երբ իր ինքնութիւնը կորսնցնէ, կամ շամփուրի վրայ կամ շուկան: Առաջին աքաղաղը հաստատուն գրամագլուխ մ'է, իսկ երկրորդը՝ շարժուն: Այսպէս է նաև կովը: Աշխատութեան յատկացեալ կովը հաստատուն գրամագլուխ մ'է, իսկ սպանդի յատկացեալ կովը՝ շարժուն: Դրամն ալ ինքնին ո՛ր և է ծառայութիւն չի մատուցաներ: Մարդ կրնայ իր սնտուկին մէջ շատ ոսկիներ պահել և զանոնք դիտելով հաճոյք զգալ: Այդ ոսկիները ծանր մտահոգութիւն կրնան պատճառել, բայց անտեսական ո՛ր և է ծառայութիւն չեն կրնար մատուցանել այդ վիճակին մէջ: Դրամն այն ատեն միայն օգտակար կըրնայ ըլլալ երբ ո՛ր և է առարկայի կամ ծառայութեան վերածուի: Սխալ է ըսել « գրամին սակը », վասնզի իրօք դրամը չէ որ փոխ կը արուի, այլ արժէք մը: Փոխառուն՝ դրամը ձեռք ձգելուն պէս՝ մէկ մտահոգութիւն ունի, այսինքն անմիջապէս անոր ինքնութիւնը կորսնցնել ո՛ր և է օգտակար առարկայի կամ ծառայութեան վերածելով զայն: Հետեւապէս դրամը շարժուն գրամագլուխ մ'է: Ամբողջով ըսենք. — Հաստատ գրամագլուխ է այն ամէն բան որ իր ինքնութիւնը չի կորսնցնէ. իսկ այն որ կը կորսնցնէ. Եւրօնը գրամագլուխ է. կամ ուրիշ խօսքով, հաստատ գրամագլուխը գործիքն է, իսկ Եւրօնը գրամագլուխը՝ նախնական նիւթն ու արդիւնքը (produit): Հաստատ գրամագլուխ են հանքերը, հողը, շինութիւնները, մեքենաները, գործիքները, նաւերը, կառքերը, չահագործութեան ծառայող կենդանիները, տնական առարկաները, գեղարուեստական նիւթերը ևն.: Շարժուն գրամագլուխ են նախանիւթերը, ապրանքները, դրամը:

Պ Ա Ն Ք Ա

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Պ Ա Ն Ք Ա

Աւանդ.— Զեղչ.— Ընթացիկ հաշիւ.— Փոխատուութիւն եւ կանխավճար.— Փոխանակութիւն եւ արպիծրած:


Պանքաներու այս տեսակ մը տեղագրութեան մէջ համառօտակի նկարագրեցինք անոնց կատարած զանազան պաշտօնները սեղանաւորական աշխարհին մէջ: Հիմայ հարկ է մանրամասնօրէն ուսումնասիրել անոնց գլխաւոր պաշտօնները, առեւտրական գործերու հետ անոնց սերտ համերաշխութիւնն ի վեր հանելու, անոնց ծառայութիւնները շեշտելու և անոնց գոյութեան բնական պայմանները ճշտելու համար: Ըսինք արդէն թէ պանքէոք միջնորդ մ'է: Բայց նաև աւելի բարձր դեր մը ունի իր գրաւած դիրքով: Գործերու շարժման ու ելեւէջներուն ազդարարն է, ինչպէս պիտի տեսնենք բուն առեւտրական պանքաներու գործողութեանց վերաբերեալ հատուածէն:

* * *

1. Աւանդ.— Վաճառականին դրած աւանդն ընդհանրապէս ի տես յանձնելի է: Աւանդը կրնայ դրամ ըլլալ կամ առեւտրական թուղթեր, հաշուեցոյցեր եւն. զորս պանքէոք կը գանձէ իր յաճախորդին հաշուոյն և կը վճարէ անոր ստորագրած թուղթերը: Ենթադրենք հիմա որ միեւնոյն պանքէոն ունեցող շատ մը վաճառականներ այս մէթոտին հետեւին: Տեսէք ի՛նչ կ'ըլլայ: Պանքէոք, որ իրարու հետ առեւտրական յարաբերութիւն ունեցող իր յաճախորդներուն գործառնութիւնները ձեռքին մէջ կեդրոնացուցած է, հաշուական ամենապարզ գործողութիւններով կը յաջողի « փոխադարձ հատուցում » ի դրութիւնն հաստատել: Պանքան՝ ուսանց հաշուոյն գանձելով և այլոց հաշուոյն վճարելով՝ դրամական գործողութիւն մ'ընելու պէտք չունենար: Իր յաճախորդներուն հաշուոյն կ'անցընէ անոնց անունով կատարած վճարումներն ու գանձումները: Այս գործողութեան կ'ըսուի « փոխանցում հաշուոց »: Օրինակ.— Ա. և Բ. միեւնոյն պանքէոն հետ գործ կը տեսնեն: Առաջինը՝ գանձելու համար՝ իր պանքէոնին կուտայ 1000 ֆր. փոխանա-

կազմի մը Բ. Ի ստորագրութեամբ : Պանքէնը , փոխանակ դրամ տալու : Ա. Ին հաշիւն 1000 Ֆրանք պահանջող կընէ և Բ. Ի հաշիւը՝ պարտական : Այս գրութեան առաւելութիւններն յայտնի են : Ահագին գործառնութիւններ կ'ըլլան պարզ հաշիւներով և դրամի ամենափոքր մթերքով : Անգլիոյ մէջ մանաւանդ շատ տարածուած է այս գործնական մէթոտ : Եւ առաւելութիւնը միայն արագութեան ու ժամանակի խնայութեան մէջ չէ : Հո՛ւ է մանաւանդ որ պանքէնը չի պարտաւորուիր մեծաքանակ դրամ անշարժ վիճակի մէջ պահել և հետեւաբար կրնայ իր դրամագլուխն ուրիշ գործերու պահելեցնել : Վաճառականներուն համար ալ խնայութիւն կայ : Նախ պէտք չեն ունենար բազմաթիւ պաշտօնեաներ գործածելու : Եւ յետոյ սնտուկի հաշիւները կը պըտիկնան , կը սահմանափակուին և հաւանական սխալներու առաջքը կ'առնուի : Նաեւ չեն պարտաւորուիր քովերնին մեծ գումարներ պահելու , իրենց պարտքերը պայմանաժամին վճարելու համար : Այսօր միայն վաճառականները չեն որ այս դիւրութիւնները կը վայելեն : Մասնաւորներ ալ այս պանքաներուն մէջ աւանդ կը ձգեն ի տես կամ պայմանաժամով , և չեկերու միջոցաւ կը վճարեն իրենց տան վարձքը , անձնական կամ տնական ծախքերը , իրր տոմար չէքերու տետրակ մը միայն ունենալով : Այս տեսակ գործողութիւններ կատարող պանքէնը շատ մեծ խոհեմութեամբ միայն կրնայ գործածել իր պատրաստ դրամը : Պանքաներ կան որք բնաւ ձեռք չեն դպցներ իրենց պահեստին : Անգլիական ձօյնդ Սիօֆս պանքաները շատ քիչ անգամ կանխավըճար կ'ընեն արժէթուղթերու փոխարէն : Իրաւ , Պիլ-Պրոֆրանսերէն կ'առնեն ծանօթ վաճառականներու , պանքէններու ստորագրութիւնը կրող առեւտրական թուղթեր , բայց իբր աւանդ միայն : Ուզած ատեննին կրնան Պիլ-Պրոֆրէն պահանջել փոխարէնը , որովհետեւ այս վերջինն արդէն յանձնառու եղած է վճարելու՝ երաշխաւորութեան թուղթով մը : Պանքէնին շահն յանձնարարող չէք մ'է միայն . բայց վտանգ չունի կամ շատ քիչ : Այս կարգի պանքաներու կատարած գործողութիւններու մէջ են նաեւ վարկագիր տալ , արժէթուղթեր պահել , կարոնները գանձել , վիճակահանութեանց ատեն թիւերը նայիլ եւն . : Կարգ մը պանքաներ , քանի մը տարիէ ի վեր , իրենց յաճախորդներուն վարձու կուտան սընտուկներ , գողութեան ու հրդեհի դէմ ամէն պատասխանատուութիւն ստանձնելով , ինչպէս ըրաւ Քրէտի Լիօնէն՝ ի Պոլիս :

Ն Մ Ո Յ Հ Ն Ե Ր
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ



Cons/ple le 23 Mai 1901

Monsieur ,

Nous prenons la liberté d'ouvrir chez vous un crédit au porteur de la présente, M. A. B.

Soyez assez bon pour lui avancer à notre débit toute somme dont il pourrait avoir besoin jusqu'à concurrence de 500 L. T. soit sur ses reçus, soit sur les traites qu'il tirerait sur notre caisse à votre ordre, suivant qu'il vous sera le plus agréable.

Agréez, Monsieur, nos civilités empressées.

Voici la signature de Mr. A. B. C. D.

.....

Cons/ple 23rd May 1901

Sir,

I take the liberty of opening a credit with you in favour of the bearer, Mr. A. B.

Be so good as to advance him on our account any sums for which he may have occasion to the extent of 500 L. T. either against his receipts, or his drafts on us to your order, as may be most convenient to yourself.

Believe us to be

Very truly yours

C. D.

افندی

حامل ورقپاره (ا.ب.۰) افندی نامنه نزد عالیکزده بر اعتبار
مالی کشارینه اجتسار ایله ۵۰۰ عثمانلی لیراسنی تجاوز ایتمهک و
حسابمزه ذمت قید اولنق اوزره مومی الهیه احتیاجی اوله بیله جک
مبالغی اعطایه همت بیورمکزی و کرک مقابلنده مقبوض سنداتی
المق و کرک طرفندن امرکزه محرر اوله رق اوزریمزه پولیچه لر
کشیده ایلمک صورتلرینک هر هانکیسی تنسیب بیوریلور ایسه
او وجه ایله معامله ایتمکزی رجایه مسارعت ایلرم باقی احترامات
فائقه مک مظهر حسن قبول اولسی متمنا در افندم .

فی ۱۰ مایس سنه ۳۱۷

۱۰ . ۱۱۱۱۱۱ , 10 ۱۱۱۱۱۱ 1901

Տէ՛ր

Կը համարձակինք Ձեր մօտ վարկ մը բանալ գրաբերիս՝
Մ. Ա. Բ. ի: Հաճեցէք պէտք ունեցած գրամը տալ իրեն
մեր հաշուոյն՝ մինչեւ 500 օսմ. ոսկի: Փոխարէն կա՛մ ստացա-
գիր կուտայ կամ Ձեր հրամանին փոխանակագիր կը քաշէ
մեր վրայ, ինչպէս որ կը յարմարի Ձեզ:

Հաճեցէք ընդունիլ, Տէ՛ր, մեր խորին յարգանքը:

Գ. Դ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0083828

